Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºîàôÂÚ²Ü êî²ÐØ²Ü²¸ð²Î²Ü ¸²î²ð²ÜÆ

²ÞÊ²î²Î²ð¶²ÚÆÜ àðàÞàôØÀ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖՐԱՆՍԻԱ-ԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐ-ՎԱԾ ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒ-ԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Հայաստանի Հանրապետության կառա-վարության եւ Զարգացման ֆրանսիական գործակալության միջև 2016 թվականի հունվարի 26-ին ստորագրված վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցիչը սահմանա-դրական դատարանի կողմից պահանջված նյութերը ներկայացրել է 2016թ. ապրիլի 25-ի երեկոյան, ինչպես նաև չեն ներկայացվել համաձայնագրի երկու կետերի՝ 9.7 և 14.2, ճշգրտված հայերեն տարբերակները, ուստի գործի դատաքննությունը հետաձգել և այն սկսել ստացված փաստաթղթերը և Գնումների ուղեցույցն ուսումնասիրելուց, ինչպես նաև համաձայնագրի երկու կետերի՝ 9.7 և 14.2, ճշգրտված հայերեն տարբերակները ստանալուց հետո՝ 2016 թվականի ապրիլի 29-ին, ժամը 15.00-ին:

Ð²Ú²êî²ÜÆ Ð²Üð²äºîàôÂÚ²Ü
êî²ÐØ²Ü²¸ð²Î²Ü ¸²î²ð²ÜÆ
Ü²Ê²¶²Ð **¶.Ð²ðàôÂÚàôÜÚ²Ü**

26 ³åñÇÉÇ 2016 Ãí³Ï³ÝÇ
êî²à-28